

ր»-ի, որի հրատարակութեան ձեռնարկել են Մկ. Պարսամեան, Ա. Անտոնեան եւ Հ. Սամուէլ:

Մեզ հասածը մէկ փոքր մասն է դեռ

վերջին ամիսների գրական քերքի: Ուրախութեամբ ենք արձանագրում, որ հայ միտքը առանց ընկճւելու շարունակում է գործել եւ արտադրել:

ԱՐՀԱԻԻՐՔԻ ՕՐԵՐԸ

Ընթերցողները կը նկատեն, անշուշտ, որ այս անգամ «Վէմ»-ում չկան Վ. Միւնսթերեանի «Արհաւիրքի Օրեր»-ը, որ այնքա՛ն յուզումով կարդացուում էին համարից համար: Ուրախութեամբ պիտի յայտնենք, որ հեղինակին յաջողւել է ապահովել հրատարակութիւնը, եւ «Արհաւիրքի Օրեր»-ը այս աշնանը լոյս պիտի տեսնեն առանձին հատորով: Որպէսզի հատորը չլինի ամբողջապէս արատաւորիւմ, մենք սիրով գիջեցինք եւ

նոյն իսկ խորհուրդ տւինք, որ մնացած մասը — ընդամենը չորս գլուխ — առաջին անգամ երեսայ առանձին հատորի մէջ: Վ. Միւնսթերեանը հիմնական վերամշակութեան է ենք արել իր յուշերի առաջին մասը՝ աւելի լայն տեղ տալով պատերազմին, մանաւորապէս դէպքերին, ի միջի այլոց եւ Հ. Յ. Գ. Կարենոյ Ընդի. Ժողովին: Հատորը պիտի լինի պատկերազարդ եւ տպւելու է «Յուսարեր»-ի տպարանում:

Գ. ԴՈՎՈՆԵԱՆԻ ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐԸ

Դոդոնեան մինչեւ հիմա ծանօթ էր իբրեւ հեղինակ «Ծիծեռնակ» երգի եւ մէկ քանի այլ ոտանաւորների: Այժմ, Վրաստանի համալսարանի ուսուցիչ Ի. Բեկարեանը, որ վերջին երկու տարիները ուսումնասիրում էր Դոդոնեանի գործերը, երեսուն է հանել աւելի քան երկու հարիւր աշխատութիւններ Դոդոնեանի ստորագրութեամբ, որոնք մինչեւ այժմ անտիպ են մնացել: Դրանք բազմաթիւ են երգերից, բանաստեղծութիւններից, պատմածքներից եւ քարգմանութիւններից:

Այս յայտնութիւնը մեր լոյս է սրբիւում Դոդոնեանի գրական ստեղծագործութեանց վրա: Այդ անտիպ երգերը ընդհանրապէս սողորած են ժողովրդավարական եւ ազատասիրական տրամադրութիւններով: Դոդոնեան հեղինակ է իր ապրած ժամանակի ընկերային կարգերը: Այդ տեսակետից ուշագրաւ են «Երկու եղբայր» եւ «Միքէմա՞րդ է» պատմածքները, «Սիրելի

հայրենիք» եւ «Համբողջներ» վիպերգութիւնները եւ մի քանի ուրիշ բանաստեղծութիւններ:

Վրաստանի համալսարանը տպագրութեան է յանձնել այդ անտիպ գործերը, որոնք պիտի կազմեն երեք հատոր: Առաջին հատորը, որ հրատարակում է վրացերէն եւ հայերէն լեզուներով, բովանդակում է մի ներածութիւն «Ծիծեռնակ»-ի հեղինակի կեանքի ու գործի մասին: Երկրորդ հատորում պիտի երևեն Դոդոնեանի ստեղծագործութիւնները՝ աւելի քան երկու հարիւր անտիպ գործեր, ինչպէս և զանազան պարբերաբերքերի մէջ տպագրւած քանիստ հինգ երգեր, «Ծիծեռնակ»-ի փոփոխակները (այս երգը ունի 12 փոփոխակ), «Ծիծեռնակ»-ի քարգմանութիւնները (միայն վրացերէնի քարգմանած է զանազան քարգմանիչների կողմից 12 անգամ, ռուսերէնի՝ 14 անգամ) : Երրորդ հատորում պիտի գտնուին Դոդոնեանի տասը վիպերգութիւնները,

պատմածքները, քարգմանութիւններ (Գեօքէից, Բայրընից, Հայնէից, Բէրանժէից, Քոնիովից, ինչպէս եւ ծանօ-

քագրութիւններ, բառարաններ, ժամանակակից մամուլի կարծիքները եւ գնահատականները Դոդոնիսեանի մասին:

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԿԵԴՐ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Ռումանահայ կեդր. Մատենադարանը՝ հիմնած տասնեակ մը տարի առաջ Պուքրէշի մէջ՝ այս պահուս իր տեսակին մէջ ամենէն պատկառելի Հայ հիմնարկութիւնն է բովանդակ Պալեաններու մէջ, եւ իր պարունակութեամբը ու այցելուներու վրա ձգած տպաւորութեամբը պատիւ կը բերէ հայ անունին: Թափած ջանքերու շնորհիւ ոչ միայն կարելի եղած է ցարդ համախմբել հոն ստաւար քիւ մը արժէքաւոր եւ յանախ հազագիւտ գիրքերու եւ պարբերականներու, այլ եւ պատմական ու գեղարեստական արժէք ունեցող բազմաքիւ առարկաներ, — նկարներ, ձեռագիրներ, վաւերագրեր, դրամներ, փորագրութիւններ, բանածոներ եւ այլն, — որոնք Մատենադարանին տեսակ մը հայկական քանգարանի բնոյթը կու տան:

Զեռնարկած ըլլալով յառաջիկայ աշունէն նոր զարկ մը տալ մատենադարանին ոչ միայն զայն հանրութեան բանալով իրքեւ ընթերցալայր, այլ եւ առաջ ու ազդիւր հայրայրերով հայ եւ օտար ուսումնասիրողներու ու նաեւ հայ արեստի մտոյններ ի ցոյց դնելով այցելուներու՝ վարչութիւնը անհրաժեշտ կը զգայ հրապարակային կոչ ուղղել հայ հասարակութեան՝ ամօր աջակցու-

քիւնը խնդրելով Մատենադարանի նոսրացման համար:

Ռումանիոյ եւ արտասահմանի հայ ժողովուրդին դիմելով՝ Մատենադարանի վարչութիւնը ջերմապէս կը խնդրէ իրեն տրամադրել ամէն գիրք եւ առարկայ, որ կրնայ որ եւ է շահեկանութիւններ կայացնել իր գրական, գեղարեստական եւ պատմական արժէքին համար, մանաւանդ նորագոյն հայ գրականութեան եւ հայագիտութեան վերաբերեալ գիրքեր, որոնցմէ զգալի կերպով զուրկ է մնացած Մատենադարանը ցարդ:

Մեծ շնորհակալութեամբ պիտի ընդունի նաեւ ինչ որ կրնայ շահագրգռութիւն արթնցնել օտար այցելուներու մէջ, ինչպէս հայկական դրամ, դրոշմագրութիւն, ասեղնագործութիւն, մետաղեայ փորագրութիւն, մանրանդրար, լուսանկար եւ այլն, որոնք մըշտական կերպով ի ցոյց պիտի դրին յատկապէս պատրաստած ապակեղարաններու մէջ:

Առաջումները կը խնդրի ընել Մատենադարանի վարչութեան ատենապետին անունով.—

Kevork Hagi Artin,

Str. Oltuz, N° 3,

Bucarest (Roumanie)

ԵՐԿՈՒ ՄԵԾԱՐԺԷՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկրագնդի տարբեր կողմերից երկու մեծարժէք գրքեր հասան վերջերս: Մէկը հնդկահայ վաստակաւոր բանասէր Մեսրոպ Բ. Սէրի «Հայերը Հնդկաստան»

նում» — «Armenians in India» հատորն է՝ լոյս տեսած կալկաթայում, միւսը՝ ամերիկահայ երիտասարդ մտաւորական Ա. Սարգսեանի աշխատութիւն